https://doi.org 10.59821/18294219-2025.1-sea11

Մանե Սաֆարյան
Լոռու մարզի դատախազության դատախազ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ[1]

Համառոտագիր

ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակություն ձևավորելու հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշման համաձայն՝ օրենսդրությունը պետք է հիմնարար պատկերացումներ տա տեղեկատվության, էլեկտրոնային փաստաթղթի, թվային ստորագրության, գաղտնիքի, հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև պետք է օրենսդրորեն սահմանվեն տեղեկատվության հաշվառման, մշակման, կիրառման, տրամադրման, ինչպես նաև էլեկտրոնային փոխհարաբերությունների կանոնները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման այս միտումից անմասն չի մնացել նաև քրեական արդարադատության ոլորտը: Տարեցտարի Հայաստանի Հանրապետությունում աճում է ինչպես թվային տեխնոլոգիաների կիրառմամբ հանցագործությունների կատարման թիվը, այնպես էլ քրեական վարույթի ընթացքում էլեկտրոնային և/կամ թվային տվյալների օգտագործման անհրաժեշտությունը: Քրեական արդարադատության ոլորտում էլեկտրոնային տեղեկատվության դերի և տեղի հստակեցումը դարձել է ժամանակաշրջանի հրամայական:

Սույն աշխատանքի շրջանակներում քննարկվել են քրեական դատավարության ապացուցման համակարգում ապացույցի առանձին տեսակի՝ «էլեկտրոնային ապացույց»-ի ներդրման վերաբերյալ գիտական մոտեցումները, քրեական արդարադատության ոլորտում էլեկտրոնային և/կամ թվային տեղեկատվության օգտագործման հիմնախնդիրները:

Աշխատանքում քննարկվել են ժամանակաշրջանի մարտահրավերներին ապացուցման համակարգի համապատասխանության հիմնախնդիրները: Կատարված վերլուծության արդյունքում կատարվել են մի շարք առաջարկություններ՝ ապացուցման արդի համակարգը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպերին համապատասխանեցնելու նպատակով:

Հիմնաբառեր- էլեկտրոնային տեղեկատվություն, էլեկտրոնային կրիչ, էլեկտրոնային ապացույց, իրեղեն ապացույց, արտավարութային փաստաթուղթ:

[1] Հոդվածը ներկայացվել է 05.05.2025թ., գրախոսվել է 20.06.2025թ.:

Ներածություն

Էլեկտրոնային տեղեկատվության դերի աճը հանգեցրել է համապատասխան հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտության: Այս ժամանակակից մարտահրավերը քրեական դատավարությունում արտահայտվում է այնպիսի իրավակիրառ մեխանիզմների մշակման պահանջով, որոնք կապահովեն էլեկտրոնային տվյալների ապացուցողական համակարգում ընդգրկման հնարավորությունը՝ ապացույցների վերաբերելիության, թույլատրելիության և հավաստիության օրենսդրական չափանիշների պահպանմամբ:

Իրավակիրառ պրակտիկայում թվային և/կամ էլեկտրոնային տեղեկատվությունը ներկայումս հավաքվում և օգտագործվում է քրեադատավարական ապացուցման գործընթացում, սակայն դա, ըստ էության, իրականացվում է իրավական անհստակության պայմաններում: Օրենսդրական հստակ հիմքերի բացակայությունը հանգեցրել է նրան, որ իրավական հանրությունը բավարար ուշադրություն չի դարձնում թվային տվյալների ապացուցողական արժեքին, իսկ իրավակիրառողը, կարծես թե, բավարար չափով չի գիտակցում էլեկտրոնային տվյալների բնույթը, ձեռքբերման եղանակների առանձնահատկությունները և, ըստ էության, ապացույցի թույլատրելիության տեսանկյունից բավարար է համարում էլեկտրոնային տվյալները թղթի վրա տպագրելու և դրանց ծագման աղբյուրը նշելու հանգամանքները:

Հոդվածի ուսումնասիրության օբյեկտն են հանդիսանում այն հիմնախնդիրները, որոնք ծագում են քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային և/կամ թվային տեղեկատվության ձեռքբերման, ստուգման և գնահատման ընթացքում: Հետազոտության նպատակը՝ էլեկտրոնային տեղեկատվության էության, նշանակության, բնորոշ հատկությունների, քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային կամ թվային տեղեկատվության դատավարական առանձնահատկությունների տեսական, օրենսդրական ու գործնական հիմնահարցերի հնարավորինս ամբողջական ուսումնասիրությունն է, վերլուծությունը, ինչպես նաև կատարված հետազոտությունների արդյունքներով առաջադրված հարցերի լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

1. Էլեկտրոնային տեղեկատվության էությունը և հասկացությունը.

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ամրագրեց ինչպես քրեադատավարական ոլորտում նախկինում կիրառված, այնպես էլ օրենսդրական նորույթ հանդիսացող մի շարք հասկացություններ: Դրանց թվում առանձնացվում են «էլեկտրոնային սարքեր կամ կրիչներ», «էլեկտրոնային ստորագրություն», «էլեկտրոնային փաստաթուղթ», «էլեկտրոնային քրեական վարույթ (կամ էլեկտրոնային քրեական գործ)», «էլեկտրոնային նյութեր», «էլեկտրոնային համակարգ», «էլեկտրոնային հասկացություն», «էլեկտրոնային տեղեկատվության կրիչներ», ինչպես նաև «թվային խուզարկություն» հասկացությունները: Թեև օրենսդրությունը նկատելի առաջ-

ընթաց է արձանագրել թվայնացման գործընթացների կարգավորման ուղղությամբ, այնուամենայնիվ, «էլեկտրոնային ապացույց» հասկացությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում հստակ ձևակերպում չի ստացել:

Էլեկտրոնային ապացույցների ոլորտում միասնական և համապարփակ կարգավորում ապահովելու, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում համահունչ մոտեցումներ ձևավորելու նպատակով ստեղծվել է միջազգային IOCE կազմակերպությունը (International Organization on Computer Evidence): Կազմակերպության հիմնական առաքելությունն է էլեկտրոնային ապացույցների հավաքման, պահպանման և մշակման միջազգային սկզբունքների սահմանումը:

Նմանատիպ նախաձեռնություն իրականացվում է նաև ԱՄՆ-ում՝ SWGDE կազմակերպության (Scientific Working Group on Digital Evidence) կողմից, որի գործունեությունն ուղղված է համակարգչային կրիմինալիստիկայի ոլորտում ընդհանուր գիտական և մեթոդաբանական մոտեցումների մշակմանը: Այս կառույցները կարևոր դեր են խաղում թվային ապացույցների իրավական կարգավորման և տեխնիկական ստանդարտների համադրելիության ապահովման գործընթացում:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է էլեկտրոնային տեղեկատվությանն առնչվող մի շարք հասկացությունների նշանակությունը, մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝

«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.(...)

Էլեկտրոնային կրիչ՝ մագնիսական սկավառակ, մագնիսական ժապավեն, լազերային սկավառակ, կիսահաղորդչային և այլ նյութական կրիչներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային կամ այլ տեխնիկական միջոցներով տեղեկատվության գրանցման և պահպանման համար(...)»:

Գտնում ենք, որ նշված հասկացությունները ամբողջովին չեն բացահայտում էլեկտրոնային տեղեկատվության էությունը: Մասնավորապես, հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային փաստաթուղթը, թեև կարող է պահպանվել ֆիզիկական էլեկտրոնային կրիչի վրա, կարող է նաև գոյություն ունենալ առանց որևէ կրիչի՝ առցանց միջավայրում: Օրինակ՝ տվյալները կարող են պահպանվել համացանցային օգտահաշիվներում, որոնք հասանելի են ցանկացած սարքով, կամ «ամպային» հարթակներում (iCloud, Dropbox, Google Drive, Облако Mail.Ru և այլն), որոնք ապահովում են տեղեկատվության պահպանումը ֆիզիկական կրիչից դուրս՝ օգտվողի համար ոչ տեսանելի ձևով:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նույնիսկ այդ թվային տվյալները նյութապես արձանագրվում են սերվերների վրա, որոնք գտնվում են ֆիզիկական տարածքում: Սակայն այդ սերվերները կարող են գտնվել աշխարհի տարբեր

կետերում, ինչը տվյալների իրավական կամ փաստական ձեռքբերումը հաճախ դարձնում է խիստ բարդ կամ նույնիսկ անհնարին: Ըստ դատավարագետ Ն.Ա.Զիգուրայի՝ համակարգչային տեղեկատվությունը ֆիզիկական կրիչի վրա ներկայացված էլեկտրոնային-թվային տվյալներն են, որոնք ստեղծված են ամրապնդման, մշակման և փոխանցման ծրագրային մեթոդներով, ինչպես նաև էլեկտրոնային սարքի օգտագործման և կառավարման համար նախատեսված հրամանների ամբողջություն, որը նախատեսված է էլեկտրոնային մեքենայում և դրա համակարգերում օգտագործվելու կամ այն ղեկավարելու համար[2]:

2. Էլեկտրոնային տեղեկատվությունը ապացուցման համակարգում և էլեկտրոնային ապացույցները որպես ապացույցի առանձին տեսակ սահմանելու հիմնախնդիրները.

2.1 Էլեկտրոնային տեղեկատվությունը ապացուցման համակարգում.

Ապացուցման հասկացությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Ապացուցումը սույն օրենսգրքով նախատեսված՝ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է»:

Հաշվի առնելով ապացուցման՝ քրեական դատավարության մեջ ունեցած առանցքային դերը, պետք է արձանագրել, որ այն չի կարող իզոլացվել հասարակական զարգացման տեխնոլոգիական միտումներից: Էլեկտրոնային տվյալների դերի աճը հանգեցրել է այնպիսի հասարակական հարաբերությունների առաջացման, որոնք պահանջում են հստակ և արդի իրավական կարգավորում: Այս իրողությունը քրեական դատավարության համատեքստում արտահայտվում է էլեկտրոնային տեղեկատվության՝ գործող ապացուցման համակարգում օրենսդրությամբ սահմանված վերաբերելիության, թույլատրելիության և հավաստիության պահանջների պահպանմամբ ներառման համար իրավական հնարավորության նախատեսման անհրաժեշտությամբ:

Ապացուցման գործող նորմատիվ կարգավորումները չեն բավարարում այն պահանջներին, որոնք բխում են էլեկտրոնային տեխնոլոգիաների լայն կիրառման արդյունքում ձևավորված նոր հասարակական հարաբերություններից: Այս իրավիճակը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է մշակել և օրենսդրորեն ամրագրել էլեկտրոնային տեղեկատվության օգտագործման համար օպտիմալ դատավարական ձևաչափ, որը կապահովի ապացուցման ամբողջ գործընթացի իրավաչափությունը և արդյունավետությունը:

Ապացուցողական իրավունքում էլեկտրոնային տեղեկատվության օգտագործման համատեքստում արմատական փոփոխությունների անհրաժեշտությունը միանշանակ չի ընկալվում մասնագիտական շրջանակներում: Այսպես, օրինակ

[2] Տե՛ս Зигура Н.А. Компьютерная информация как вид доказательств в уголовном процессе. Челябинск, 2010.

Պ.Ս.Պաստուխովը գտնում է, որ «ընդհանրապես պարտադիր չէ էլեկտրոնային տեղեկատվությունից ապացույցների ձևավորման համար հորինել ապացույցների նոր տեսակ, «ապացուցման նոր տեխնոլոգիայի» ներմուծում, հատկապես, որ այդ դեպքում կարող է տեղ գտնել գործի համար ապացուցողական նշանակություն ունեցող էլեկտրոնային (թվային) տեղեկատվության հետազոտության, ամրագրման, առգրավման առանձնահատուկ մեթոդաբանությունը: «Էլեկտրոնային ապացույցները» չեն իրականացնում հեղաշրջում ապացուցման մեթոդի և քրեադատավարական ձևաչափի առումով»[3]:

Հեղինակի նշած դիրքորոշման առնչությամբ հարկ է փաստել, որ ինքնին մեր պնդումն առ այն, որ քրեադատավարական ապացուցման նորմատիվ կարգավորման գործող մակարդակը չի համապատասխանում էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառման ոլորտում ձևավորված հասարակական հարաբերություններին, չի ենթադրում, որ ապացուցման համակարգում առկա է արմատական փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտություն: Սակայն անհրաժեշտ է ընդունել, որ որոշ էական և խորքային փոփոխություններ անխուսափելի են՝ իրավական հստակության ապահովման նպատակով:

Ապացույցի հասկացությունը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետում՝ «ապացույց՝ փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալ, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունում ապացույցի հասկացության հիմքում ընկած է փաստական տվյալի (ինֆորմացիայի) և դրա աղբյուրի միասնությունը: Ըստ այս հայեցակարգի՝ առաջինը՝ ապացույցի հասկացությունը բացահայտվում է ոչ թե փաստի, այլ տեղեկության միջոցով, երկրորդ՝ այս հայեցակարգն ապացույցը դիտարկում է ձևի և բովանդակության տեսանկյունից:

Քրեադատավարական ապացուցման համակարգում էլեկտրոնային տեղեկատվության ներառումը, անկախ կիրառված մեթոդից, ենթադրում է դրա համապատասխանություն ապացույցների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Այնուամենայնիվ, ներկայիս քրեադատավարական գիտությունը չունի միասնական և ամբողջական մոտեցում էլեկտրոնային տվյալների ապացուցողական կարգավիճակի հարցում: Գիտական շրջանակներում նկատվում են տարբեր կարծիքներ. որոշ հեղինակներ այն դիտարկում են որպես իրեղեն ապացույց, այլ մասնագետներ՝ որպես արտավարութային փաստաթուղթ, մինչդեռ մի խումբ գիտնականներ առաջարկում են էլեկտրոնային ապացույցը ճանաչել որպես ապացույցի առանձին և ինքնուրույն տեսակ:

Պետք է հիշել, սակայն, որ այս մոտեցումներից որևէ մեկին նախապատվություն տալը չի կարող լինել ինքնանպատակ, այլ նման փոփոխությունները

[3] Տե՛ս Пастухов П.С., Терехин В.В., «К вопросу о понятии и сущности электронных доказательств в уголовном процессе», // Вестник КРАГСиУ. Серия “Государство и право”, 2014.

պետք է բխեն իրավակիրառ պրակտիկայի պահանջներից, ունենան գիտական հիմնավորում և նպաստեն ապացուցման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

2.1 Էլեկտրոնային տեղեկատվությունը՝ որպես արտավարութային փաստաթուղթ կամ իրեղեն ապացույց.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արտավարութային փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս»:

Ըստ Ն.Ա.Զիգուրայի, արտավարութային կամ այլ փաստաթղթերի շարքին են դասվում այն փաստաթղթերը, որոնք չեն ձևավորվել վարութային գործունեության արդյունքում: Դրանք ձեռք են բերում ապացուցողական նշանակություն այն պարագայում, երբ դրանք պարունակում են քրեական գործի հանգամանքների համար նշանակություն ունեցող տվյալներ: Հեղինակը նշված փաստաթղթերը դասակարգում է ըստ պաշտոնականի (տեղեկանքներ, ակտեր և այլն) և ոչ պաշտոնականի (օրինակ՝ անձնական նամակը): Այս փաստաթղթերը կարող են լինել ինչպես սկզբնական (բնօրինակները), այնպես էլ երկրորդային (պատճեններ): Փաստաթղթերը կարող են ձեռք բերվել որևէ վարութային գործողության արդյունքում կամ ներկայացվել վարույթի որևէ մասնակցի կողմից:[4]

Արտավարութային փաստաթուղթը չի կարող օգտագործվել որպես ապացույց, եթե անհայտ է դրա ձեռքբերման աղբյուրը: Փաստաթուղթը բավարարում է ապացույցի թույլատրելիության պահանջին այն դեպքում, եթե այն համապատասխանում է հետևյալ երկու պայմաններին՝ 1) առկա են բավարար տվյալներ փաստաթղթի հեղինակի մասին (տվյալներ, որոնք թույլ են տալիս անհատականացնել այն պաշտոնատար կամ մասնավոր անձին, ով ստորագրել է այդ փաստաթուղթը), 2) վարութային եղանակով արձանագրված հանգամանքները, որոնցում տվյալ փաստաթուղթը հայտնվել է քրեական գործի նյութերի մեջ (ստացվել է այս կամ այն քննչական կամ դատական գործողության կատարման ընթացքում և այլն):

Էլեկտրոնային, ինչպես թղթային տարբերակով փաստաթուղթը, պետք է ունենա անհատականացման հնարավորություն, որը թույլ կտա առանձնացնել այն ֆայլերի զանգվածի միջից և/կամ գտնել այն մեքենայական կրիչի մեջ: Էլեկտրոնային փաստաթղթի հիմնական ռեկվիզիտներ են ֆայլի անվանումը, ֆայլի ֆորմատը, ֆայլի չափը, ֆայլի ստեղծման և կատարված վերջին փոփոխության ամսաթիվը, ֆայլային համակարգում դրա տեղակայումը:

[4] Տե՛ս Зигура Н.А., Компьютерная информация как вид доказательств в уголовном процессе, Челябинск, 2010.

Այսինքն, արտավարութային փաստաթուղթ կարող է լինել միայն այնպիսի փաստաթուղթը, որը պարունակում է անհատականացման հնարավորություն և ձեռք է բերվել իրականացված պատշաճ դատավարական ընթացակարգի արդյունքում: Ըստ Ն.Ա.Զիգուրայի, սկզբունքորեն հնարավոր է պարզել թե ով է էլեկտրոնային փաստաթղթի հեղինակը:

Տեսաբանը նշում է, որ համակարգչային տեղեկատվությունը ստեղծվում է ծրագրի միջոցով սահմանված ալգորիթմի օգնությամբ: Նշված ծրագիրն իր հերթին ստեղծվում է մարդու կողմից: Համակարգիչը մտածել չի կարողանում, այն կարողանում է միայն փոխակերպել այս կամ այն կերպ սահմանված ազդանշանները: Այստեղից էլ հետևում է, որ էլեկտրոնային փաստաթղթի և այլ (արտավարութային) փաստաթղթի ձևավորման մեխանիզմները տարբերվում են:

Տարբերակող հաջորդ առանձնահատկությունը կրիչին փոխկապվածության բնույթն է: Էլեկտրոնային փաստաթուղթը չունի կրիչին ամրակցված լինելու կարիք. այն կարող է գոյություն ունենալ տարբեր կրիչների վրա, սակայն պահպանել իր բնօրինակությունը:

Մյուս առանձնահատկությունը կայանում է մարդու զգայարաններով տեղեկատվության անմիջական զգացման հնարավորության բացակայությամբ: Սա պայմանավորված է էլեկտրոնային տեղեկատվության էլեկտրոնային-թվային բնույթով: Թեև այն գտնվում է որոշակի նյութական կրիչի վրա, դրա բովանդակությանը և կրիչի վրա դրա տեղակայման կոնկրետ վայրն անհնար է սահմանել առանց որոշակի համակարգչային սարքերի օգտագործման[5]:

Գտնում ենք, որ հեղինակի մատնանշած տարբերությունները առավելապես վերաբերում են էլեկտրոնային փաստաթղթի և ավանդական (թղթային) փաստաթղթի տարբերակմանը և դրանք ըստ էության խոչընդոտ չեն հանդիսանում էլեկտրոնային փաստաթուղթը որպես ապացույցի տեսակ արտավարութային փաստաթղթերի շարքին դասելու հնարավորության համար: Ինչ վերաբերում է հեղինակի այն դիտարկմանը, որ էլեկտրոնային տեղեկատվության և կրիչի միջև կապը սերտ չէ, փաստում ենք, որ սերտ կապի բացակայությունը դեռևս չի բացառում էլեկտրոնային տեղեկատվությունը արտավարութային փաստաթուղթ ճանաչելու հնարավորությունը: Գտնում ենք, որ թեև կրիչի վրա ամրագրված լինելու հանգամանքն արտավարութային փաստաթղթին ուղղված օրենսդրական պահանջ է, օրենսդրական որևէ պահանջ չկա վարույթի համար նշանակություն ունեցող տվյալի՝ կրիչի վրա «անշարժորեն» ֆիքսված լինելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, սահմանելով արտավարութային փաստաթղթի հասկացությունը, կրիչների տեսակները չի սահմանափակում բացառապես թղթայինով: Օրենսդրական կարգավորումը նախատեսում է, որ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալները կարող են պահպանվել ոչ միայն թղթային, այլ նաև մագնիսական, էլեկտրոնային կամ այլ տեսակի կրիչների վրա: Այսպիսով, նորմատիվ

[5] Տե՛ս Зигура Н.А. Компьютерная информация как вид доказательств в уголовном процессе. Челябинск, 2010.

սահմանումը ենթադրում է կրիչների ոչ սպառիչ ցանկ, ինչը թույլ է տալիս ներառել փաստաթուղթ պարունակող ցանկացած կրիչ՝ անկախ դրա ֆիզիկական ձևից:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային տեղեկատվության՝ արտավարութային փաստաթղթին վերաբերելի օրենսդրական չափանիշներին համապատասխանելու խնդրին, հարկ է նշել, որ պատշաճ վավերացված էլեկտրոնային փաստաթուղթը (օրինակ՝ էլեկտրոնային ստորագրությամբ հավաստված) կարող է ամբողջովին տեղավորվել արտավարութային փաստաթղթի հասկացության շրջանակում: Սակայն այն դեպքերում, երբ էլեկտրոնային տվյալները չեն ընձեռում բավարար անհատականացման հնարավորություն (օրինակ՝ հնարավոր չէ հստակ նույնականացնել տվյալ ֆայլի հեղինակին կամ դրա աղբյուրը), նման տեղեկատվությունն արտավարութային փաստաթղթին դասելը բարդանում է և անհրաժեշտ է լրացուցիչ դատավարական միջոցների կիրառում՝ դրա հավաստիությունն ապահովելու համար:

Անդրադառնալով էլեկտրոնային տեղեկատվության դատավարական ամրագրմանը՝ որպես արտավարութային փաստաթուղթ, հարկ է շեշտել, որ նման դատավարական ձևաչափը թույլ է տալիս տարանջատել էլեկտրոնային տեղեկատվությունն իր ֆիզիկական կրիչից: Այսինքն, երբ վերջինս ստանում է արտավարութային փաստաթղթի տեսք, դրա ապացուցողական արժեքը վերագրվում է տեղեկատվության բովանդակությանը, այլ ոչ թե կրիչին՝ իր նյութական և արտաքին հատկանիշներով:

Այնուամենայնիվ, որոշակի բարդություններ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ էլեկտրոնային տեղեկատվությունը գոյություն ունի առանց որևէ տեսանելի ֆիզիկական կրիչի վրա ամրագրված լինելու: Խոսքը, մասնավորապես, այնպիսի միջավայրերի մասին է, ինչպիսիք են համացանցային օգտահաշիվները կամ «ամպային» հարթակները (օրինակ՝ iCloud, Облако Mail.Ru, Dropbox, Google Drive և այլն), որտեղ տեղեկատվությունը պահպանվում է ֆիզիկական կրիչից անկախ՝ այսպես կոչված վիրտուալ տարածքում:

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ այսպես կոչված վիրտուալ միջավայրերում էլ էլեկտրոնային տվյալները, վերջնական հաշվով, պահպանվում են նյութապես գոյություն ունեցող սերվերների վրա: Այդ սերվերները կարող են գտնվել աշխարհի տարբեր տարածաշրջաններում, իսկ որոշ դեպքերում դրանց նկատմամբ վերահսկողությունը կարող է լինել դժվար կամ նույնիսկ անհնար: Հետևաբար, նպատակահարմար է օրենսդրական մակարդակում նախատեսել էլեկտրոնային տեղեկատվությունը որպես ապացույց դիտարկելու հնարավորությունը նաև այն պարագայում, երբ տվյալ տեղեկատվությունը ֆիզիկապես չի գտնվում կոնկրետ մատչելի կրիչի վրա:

Նշվածի հաշվառմամբ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «Արտավարութային փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա, ***ինչպես նաև համացանցային, թվային կամ***

այլ էլեկտրոնային համակարգում ամրագրված բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս»: Այս ձևակերպումը հնարավորություն է տալիս ընդգրկել ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից թվային փաստաթուղթը՝ առանց բացառելու ամպային հարթակներում կամ ինտերնետային համակարգերում պահպանվող տեղեկատվությունը:

Քննարկելով իրեղեն ապացույցի և էլեկտրոնային տեղեկատվության հարաբերակցությունն անհրաժեշտ է նախևառաջ վերհանել իրեղեն ապացույցի օրենսդրական բնութագիրը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝ 1) ենթադրյալ հանցագործության գործիքները կամ այն առարկաները, որոնք իրենց վրա ենթադրյալ հանցագործության հետքեր են պահպանել. 2) այն առարկաները, որոնք ենթադրյալ հանցավոր ներգործության օբյեկտ են եղել. 3) ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն ձեռք բերված դրամը, այլ արժեքները և առարկաները»:

Իրեղեն ապացույցները նյութական աշխարհի օբյեկտներ են, որոնք քննվող հանցագործության դեպքի հետ ունեցած կապի շնորհիվ տեղեկություններ են պարունակում դրա վերաբերյալ: Իրեղեն ապացույցն առավելապես ունի օբյեկտիվ բովանդակություն, և այն, ի տարբերություն անձնային ապացույցի, օրինակ՝ ցուցմունքի, զուրկ է սուբյեկտիվ հատկանիշից: Բանն այն է, որ իրեղեն ապացույցը բովանդակում է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող տվյալներն անփոփոխ վիճակում:

Որպես իրեղեն ապացույց էլեկտրոնային տեղեկատվությունը կարող է հանդես գալ որպես հանցագործության գործիք (օրինակ՝ վիրուսային ծրագիր), որպես հանցագործության օբյեկտ (օրինակ՝ էլեկտրոնային տեսքով պահպանվող պետական կամ առևտրային գաղտնիք), որպես հանցագործության հետք, ինչպես նաև որպես դրամ կամ այլ արժեքներ, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով (կրիպտոարժույթ, էլեկտրոնային դրամապանակներ): Էլեկտրոնային տեղեկատվության հենց նշված հատկանիշն էլ հանգեցնում է նրան, որ որոշ դատավարագետներ այն դասում են իրեղեն ապացույցների թվին, այսինքն՝ այն պարունակում է իրեղեն ապացույցին բնորոշ հատկանիշը՝ հանցագործության դեպքին օբյեկտիվ կապը:

Վերոգրյալի հաշվառմամբ էլ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսել է իրեղեն ապացույցի և արտավարութային փաստաթղթի մրցակցության դեպքերը սահմանող կարգավորում, որի համաձայն, եթե արտավարութային փաստաթուղթը միաժամանակ պարունակում է իրեղեն ապացույցի հատկանիշներ, ապա այն ճանաչվում է իրեղեն ապացույց: Նշվածը բնականաբար տարածվում է նաև էլեկտրոնային

տեղեկատվության նկատմամբ: Այսինքն, այն պարագայում, երբ էլեկտրոնային տեղեկատվությունն օբյեկտիվ կապ ունի հանցագործության դեպքի հետ, օրինակ՝ հանդիսանում է հանցագործության գործիք, այն չի կարող ճանաչվել արտավարութային փաստաթուղթ:

Տեխնոլոգիական առաջընթացի և թվայնացման պայմաններում իրեղեն ապացույցի՝ «նյութականացված օբյեկտ» լինելու օրենսդրական բնորոշումը աստիճանաբար կորցնում է իր գործնական արդիականությունը: Այս իրողության համատեքստում նպատակահարմար է վերանայել իրեղեն ապացույցի սահմանումը՝ հաշվի առնելով նաև թվային աշխարհում գոյություն ունեցող ապացուցողական օբյեկտները: Այս նկատառումներով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասը վերաձևակերպել հետևյալ ձևով. «Իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա կամ ***թվային/էլեկտրոնային օբյեկտ,*** որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել»:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալ համեմատական վերլուծությունները հարկ ենք համարում նշել հետևյալը.

Էլեկտրոնային տեղեկատվության որոշ տեսակներ կարող են ապացուցման համակարգում հանդես գալ որպես արտավարութային փաստաթղթեր: Այսպես, էլեկտրոնային փաստաթղթերը, ելնելով դրա «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում առկա սահմանումից, քրեական դատավարությունում կարող են ճանաչվել արտավարութային փաստաթղթեր: Էլեկտրոնային փաստաթղթերի որոշ տեսակներ համապատասխանում են արտավարութային փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ դրանք պարունակում են գործի հանգամանքների համար նշանակություն ունեցող տվյալներ, գոյություն ունեն նյութական կրիչի վրա, պարունակում են էլեկտրոնային ստորագրություն, ինչը հնարավորություն է տալիս անհատականացնել դրանք: Բացի այդ, արտավարութային փաստաթղթերի կառուցակարգը հնարավորություն է տալիս տարանջատել էլեկտրոնային տեղեկատվությունը և դրա կրիչը, արտավարութային փաստաթղթի ինչպես և էլեկտրոնային տվյալների դեպքում ապացուցողական նշանակություն ունի բովանդակությունը, ոչ թե նյութական կրիչները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ էլեկտրոնային տեղեկատվության ոչ բոլոր տեսակներն են հանդիսանում էլեկտրոնային փաստաթուղթ, այս պարագայում էլեկտրոնային փաստաթուղթ չհանդիսացող թվային տեղեկատվությունը չի կարող համարվել արտավարութային փաստաթուղթ: Մասնավորապես, այն դեպքում, երբ էլեկտրոնային տվյալները օբյեկտիվորեն կապված են հանցավոր գործունեության հետ, մասնավորապես՝ հանդիսանում է հանցագործության հետք, գործիք, առարկա, այն չի կարող համարվել արտավարութային փաստաթուղթ:

Էլեկտրոնային տեղեկատվության որոշ այլ տեսակներ կարող են հանդես գալ որպես իրեղեն ապացույցներ: Այն դեպքում, երբ էլեկտրոնային տեղեկատվությունը ծագում է հանցագործությունների դեպքի առնչությամբ, օբյեկտիվորեն

կապված է հանցավոր գործունեության հետ, մասնավորապես՝ հանդիսանում է հանցագործության հետք, գործիք, առարկա, այն ձեռք է բերում իրեղեն ապացույցի հատկանիշներ: Սակայն հարկ է նշել, որ իրեղեն ապացույցի օրենսդրական բնորոշումից բխում է դրա՝ նյութականացված առարկա լինելու հանգամանքը, այնինչ հարկ է փաստել, որ էլեկտրոնային տեղեկատվության ապացուցողական նշանակությունը կայանում է ոչ թե դրա նյութական կրիչում, այլ դրա բուն բովանդակության մեջ, որը չունի նյութական տեսք: Ինչպես արդեն նշել ենք, տարբերվում են իրեղեն ապացույցի և էլեկտրոնային տեղեկատվության ձևավորման մեխանիզմները, ինչը բացառում է էլեկտրոնային տեղեկատվությունը որպես առարկայական ապացույց ճանաչելու հնարավորությունը: Ավելին՝ եթե իրեղեն ապացույցներին բնորոշ է դրանց անփոխարինելիությունը և յուրօրինակությունը, ապա էլեկտրոնային տեղեկատվությանը բնորոշ են հեշտորեն պատճենահանվելու, փոփոխվելու հատկությունները: Բացի այդ, էլեկտրոնային տեղեկատվությունը սերտորեն կապված չէ դրա կրիչի հետ, կրիչը կարող է հեշտությամբ փոխարինվել, իսկ տեղեկատվությունը կարող է տեղ գտնել անսահմանափակ քանակությամբ կրիչների վրա:

Ամփոփելով վերոշարադրյալը, հարկ ենք համարում նշել, որ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ապացույցների որևէ տեսակ ամբողջապես չի արտահայտում թվային տեղեկատվության առանձնահատկությունները, մինչդեռ թվային տեղեկատվության որոշ տեսակներ կարող են պարունակել բացառիկ կարևորություն ունեցող տվյալներ, որոնք իրենց բնույթով կարող են լինել անփոխարինելի՝ դեպքի հանգամանքները բացահայտելու և օբյեկտիվ քննություն ապահովելու համար:

2.3 էլեկտրոնային տեղեկատվությունը որպես ապացույցի ինքնուրույն տեսակ.

Ինչպես արդեն նշվել է, արդի քրեադատավարական գիտական մտքի շրջանակներում ակտիվորեն քննարկվում է էլեկտրոնային տեղեկատվությունը որպես ապացույցի առանձին տեսակ օրենսդրորեն նախատեսելու նպատակահարմարությունը: Այս տեսանկյունից հետաքրքրական օրինակ է Խորվատիայի քրեական դատավարության օրենսգիրքը, որի 202-րդ հոդվածով «էլեկտրոնային ապացույց» հասկացությունն ամրագրված է որպես քրեական վարույթում ապացույցի ձև, ներառելով յուրաքանչյուր այն տեղեկատվությունը, որը ձեռք է բերվել որպես ապացույց և արտահայտված է էլեկտրոնային տեսքով:

Էլեկտրոնային ապացույցը որպես ապացույցի ինքնուրույն տեսակ նախատեսելու հարցը քրեադատավարական գիտության մեջ լայն քննարկման առարկա է: Այս հայեցակարգի կողմնակիցների թվում առանձնանում են Վ.Ն.Գրիգորևը և Օ.Ա.Մաքսիմովը, ովքեր առաջարկում են էլեկտրոնային կրիչը դիտարկել որպես ապացույցի առանձին տեսակ՝ սահմանելով այն որպես «առարկա, որը պարունակում է քրեական գործի համար նշանակություն ունեցող տեղեկա-

տվություն, որը ստեղծվել է քրեական գործի քննության ընթացքից դուրս և որի ընկալումն անհնար է առանց էլեկտրոնային միջոցների գործածման»:[6]

Նմանատիպ դիրքորոշում է որդեգրել Ն.Ա. Զիգուրան, ով ևս պնդում է, որ էլեկտրոնային-թվային ձևով առկա տվյալները պետք է դիտարկել որպես ապացույցի ինքնուրույն տեսակ:[7]

Դատավարագետ Ս.Վ.Զուևը առաջարկում է էլեկտրոնային ապացույցների հետևյալ բնորոշումը. յուրաքանչյուր տվյալ, որը ներկայացվում է էլեկտրոնային ձևով և որի հիման վրա դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննիչը քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պարզում են վարույթի ընթացքում ապացուցման ենթակա հանգամանքների, ինչպես նաև քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, էլեկտրոնային ապացույց է: Միևնույն ժամանակ հեղինակը գտնում է, որ չնայած էլեկտրոնային տեղեկատվության առանձնահատկություններին, այն կարող է հանդես գալ արդեն իսկ գոյություն ունեցող ապացույցների տեսքով՝ իրեղեն ապացույցի կամ արտավարութային փաստաթղթի:[8]

Պ.Ս.Պաստուխովի կարծիքով, էլեկտրոնային ապացույցը ապացուցման սուբյեկտի կողմից օրենքով չարգելված եղանակով ստացված և օրենքով սահմանված կարգով դատարանին ներկայացված էլեկտրոնային տեղեկատվությունն է, որն ի զորու ապահովել քրեական գործի ճիշտ լուծումը: Հեղինակը գտնում է, որ «հասարակ» իրեղեն ապացույցի կազմավորման մեխանիզմը տարբերվում է էլեկտրոնային ապացույցի ստեղծման մեխանիզմից, հետևաբար էլեկտրոնային տեղեկատվության օգտագործման հարցը միանշանակ լուծում չունի: Միևնույն ժամանակ հեղինակն այն կարծիքին է, որ «էլեկտրոնային ապացույց» հասկացությունն առանձնացնելու անհրաժեշտությունը բացակայում է:[9]

Նմանօրինակ դիրքորոշում ունի նաև Կ.Բ.Կալինովսկին, ով գտնում է, որ էլեկտրոնային ապացույցները քրեական գործին այլ վարութային տվյալների նմանությամբ վերաբերելի տվյալներ են, որոնք ազատորեն կարող են օգտագործվել որպես ուղղորդող տեղեկատվություն: Այլ խոսքով, դրանք առանձին ապացույցներ չեն հանդիսանում:[10]

Ակնհայտ սկեպտիցիզմ է դրսևորվում նաև Ա.Մ.Բարանովի մոտեցման մեջ, որը քննադատում է «էլեկտրոնային ապացույց» հասկացության ինքնուրույնությունը՝ պնդելով, որ քրեական դատավարության շրջանակում ցանկացած ապացույցի

---

[6] Տե՛ս Григорьев В.Н., Максимов О.А. Некоторые вопросы использования электронных носителей информации при расследовании уголовных дел // Полицейская деятельность. 2018. № 1. С.1-8

[7] Տե՛ս Зигура Н.А. Компьютерная информация как вид доказательств в уголовном процессе. Челябинск, 2010.

[8] Տե՛ս Зуев С.В. Электронные доказательства, используемые с уголовном процессе // Международная Ассоциация Содействия Правосудию

[9] Տե՛ս Пастухов П.С., Терехин В.В. К вопросу о понятии и сущности электронных доказательств в уголовном процессе // Вестник КРАГиуъУ. Серия «Государство и право». 2014

[10] Տե՛ս Калиновский К.Б., Маркелова Т.Ю. Доказательственное значение «электронной» информации в российском уголовном процессе // Российский следователь. 2001. № 6. С.18-19

աղբյուրն ի վերջո մարդն է: Հեղինակի դիտարկմամբ՝ ապացույց-տեղեկատվությունը գոյություն ունի բացառապես մարդու գիտակցության մեջ. առանց մարդու չկա տեղեկություն: Հետևաբար, քննչական գործողությունների արձանագրությունները, փորձագետի եզրակացությունը, դատական նիստի արձանագրությունը, արտավարութային փաստաթուղթը, իրեղեն ապացույցը պետք է դիտարկել ոչ թե որպես տեղեկատվության կրիչներ, այլ որպես այն պահպանողներ: Այս տրամաբանությամբ էլեկտրոնային միջավայրերը, ինչպես նաև տեղեկատվության պահպանման և փոխանցման տեխնիկական միջոցները, չեն կարող դիտարկվել որպես ապացույցներ՝ անկախ իրենց տեխնոլոգիական բնույթից:[11]

Մեր կարծիքով, «էլեկտրոնային ապացույցը» որպես ապացույցի առանձին տեսակ սահմանելու անհրաժեշտությունն այնուամենայնիվ բացակայում է: Մասնավորապես, նման տարանջատումը առավելապես պայմանավորված է ոչ թե ապացույց հանդիսացող տեղեկատվության բովանդակային բնույթով, այլ դրա այնպիսի ձևական առանձնահատկություններով, ինչպիսիք են կրիչի տեսակը, թվային միջավայրը կամ մատուցման տեխնիկական եղանակը: Արդյունքում՝ ապացույցների դասակարգման նման մոտեցումը կարող է հանգեցնել ապացուցման համակարգի ավելորդ բարդացման: Հաշվի առնելով թվային տեղեկատվության բազմակողմանի կիրառելիությունը, ինչպես նաև դրա ներառման հնարավորությունը արդեն իսկ գործող ապացույցների համակարգում՝ առաջարկվում է համապատասխան օրենսդրական հստակեցումներով ապահովել դրա ինտեգրումը գոյություն ունեցող ապացույցների տեսակների կառուցվածքում՝ առանց նոր, ինքնուրույն տեսակի ներմուծման:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական ապացուցման համակարգում էլեկտրոնային և/կամ թվային տեղեկատվության՝ որպես ապացույցի օգտագործման, էլեկտրոնային և/կամ թվային տեղեկատվության էության, նշանակության, էլեկտրոնային և/կամ թվային տեղեկատվության որպես ապացույցի օգտագործմանն առնչվող առկա հիմնախնդիրների համակողմանի վերլուծության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

Համակարգչային տեղեկատվությունը ֆիզիկական կրիչի վրա ներկայացված էլեկտրոնային-թվային տվյալներն են, որոնք ստեղծված են ամրապնդման, մշակման և փոխանցման ծրագրային մեթոդներով, ինչպես նաև էլեկտրոնային սարքի օգտագործման և կառավարման համար նախատեսված հրամանների ամբողջություն, որը նախատեսված է էլեկտրոնային մեքենայում և դրա համակարգերում օգտագործվելու կամ այն ղեկավարելու համար:

Ժամանակակից քրեական դատավարությունում գործող ինֆորմացիոն մոտեցման պայմաններում դժվար է ուսումնասիրության օբյեկտ դարձնել թվային ինֆորմացիան, որը չունի նյութական տեսք և գոյություն ունի միայն վիրտուալ

[11] Տե՛ս Баранов А.М. Электронное доказательство: иллюзия уголовного процесса XXI века // Уголовная юстиция. 2019. № 13. С.65.

տիրույթում: Քրեադատավարական օրենսդրությունում առկա ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործիքակազմը չի ապահովում վարույթն իրականացնող մարմնին էլեկտրոնային տեսքով գոյություն ունեցող տեղեկատվությունը գործող օրենսդրական կարգավորումներին համապատասխան որպես ապացույց համարելու և դրանք ապացուցողական զանգվածի մեջ ներառելու հնարավորությամբ: Ապացույցների ձեռքբերմանն ուղղված միջոցները հիմնականում սահմանում են նյութական օբյեկտների հայտնաբերմանը, պահպանմանն ուղղված գործընթացները, և վերջիններիս օրենսդրական կարգավորումները թույլ չեն տալիս հավաքել նյութական տեսք չունեցող, թվային տեսքով գոյություն ունեցող տվյալները:

Քրեադատավարական պրակտիկայի, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էլեկտրոնային տեղեկատվության կրիչները ճանաչվում են որպես իրեղեն ապացույց կամ արտավարութային փաստաթուղթ (այլ փաստաթուղթ):

Էլեկտրոնային տեղեկատվության որպես արտավարութային փաստաթղթի դատավարական ամրագրումը ընձեռում է հնարավորություն՝ էլեկտրոնային տեղեկատվությունը տարանջատել դրա կրիչից: Միևնույն ժամանակ, ապացույցի նշված տեսակի օրենսդրական ձևակերպումը պահանջում է, որ տեղեկատվությունն այնուամենայնիվ ամրագրված լինի որևէ կրիչի վրա: Նշված առանձնահատկությունը կարող է հանգեցնել որոշ բարդությունների այն դեպքերում, երբ էլեկտրոնային տեղեկատվությունը գոյություն ունենա առանց համապատասխան ֆիզիկական կրիչի վրա տեղ գտնելու՝ օրինակ համացանցային օգտահաշիվներում, որոնք կարող են «բացվել» ցանկացած համակարգչով, ինչպես նաև օնլայն կրիչներում՝ «ամպային» միջավայրերում (օրինակ՝ iCloud, Облоко Mail.RuDropbox, Google Drive և այլն), որոնք պահպանում են տեղեկատվությունը կոնկրետ ֆիզիկական կրիչից դուրս: Ստեղծված իրավական բացը լրացնելու և թվային իրականության մարտահրավերներին համահունչ իրավական լուծումներ ապահովելու նպատակով, առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «Արտավարութային փաստաթուղթ է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տվյալներ պարունակող թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա, ինչպես նաև համացանցային, թվային կամ այլ էլեկտրոնային համակարգում ամրագրված բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որը ձևավորվել է տվյալ քրեական վարույթի շրջանակներից դուրս»:

Էլեկտրոնային տեղեկատվության որոշ այլ տեսակներ կարող են հանդես գալ որպես իրեղեն ապացույցներ: Այն դեպքում, երբ էլեկտրոնային տեղեկատվությունը ծագում է հանցագործության դեպքի առնչությամբ, օբյեկտիվորեն կապված է հանցավոր գործունեության հետ, մասնավորապես՝ հանդիսանում է հանցագործության հետք, գործիք, առարկա, այն ձեռք է բերում իրեղեն ապացույցի հատկանիշներ: Սակայն հարկ է նշել, որ իրեղեն ապացույցի օրենսդրական բնորոշումից բխում է դրա՝ նյութականացված առարկա լինելու

հանգամանքը, այնինչ էլեկտրոնային տեղեկատվության ապացուցողական նշանակությունը կայանում է ոչ թե դրա նյութական կրիչում, այլ դրա բուն բովանդակության մեջ, որը չունի նյութական տեսք: Այս առումով գտնում ենք, որ իրեղեն ապացույցի՝ պարտադիր նյութականացված բնույթի օրենսդրական պահանջը կորցրել է իր գործնական արդիականությունը: Հետևաբար, նպատակահարմար է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա կամ թվային/էլեկտրոնային օբյեկտ, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել»:

Անդրադառնալով «էլեկտրոնային ապացույց»-ը քրեադատավարական ապացույցների համակարգում որպես ինքնուրույն տեսակ սահմանելու վերաբերյալ որոշ դատավարագետների կողմից առաջ քաշված առաջարկություններին՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նման արմատական փոփոխության օբյեկտիվ անհրաժեշտությունը ներկայումս բացակայում է: Մեր գնահատմամբ՝ ապացույցների դասակարգման այս ձևը հանգում է ձևական տարանջատման, որի հիմքում ընկած են ոչ թե տեղեկատվության բովանդակային առանձնահատկությունները, այլ բացառապես դրա արտահայտման ձևն ու կրիչի բնույթը (օրինակ՝ թվային կամ էլեկտրոնային միջավայրում առկայությունը):

Նման տարանջատումն ըստ էության, արհեստական է և կարող է ավելորդ բարդացնել քրեական դատավարության ապացուցման արդեն իսկ բարդ և բազմաշերտ համակարգը: Համոզված ենք, որ անհրաժեշտ փոփոխությունների իրականացման դեպքում էլեկտրոնային (թվային) տեղեկատվությունն արդյունավետորեն կարող է ներդրվել և կիրառվել գործող ապացույցների համակարգում՝ առանց առանձին ապացույցի տեսակի սահմանման: Հետևաբար, համաչափ և կառուցողական լուծում կարող է հանդիսանալ գործող ապացույցների տեսակների օրենսդրական կատարելագործումը, ներառյալ դրանց ընդհանուր սահմանումների և կիրառական մեխանիզմների հստակեցումը, որը թույլ կտա էլեկտրոնային տեղեկատվությանը պատշաճ կարգավիճակ հաղորդել քրեական վարույթում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված՝ 2021 թվականի հունիսի 30-ին):

Criminal Procedure Code of the Republic of Armenia (adopted on June 30, 2021).

2. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին):

Law of the Republic of Armenia "On Electronic Document and Electronic Digital Signature" (adopted on December 14, 2004).

3. ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակություն ձևավորելու հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշում:

Protocol Decision No. 7 of the Government of the Republic of Armenia dated February 25, 2010, "On Approving the Concept of Forming an Electronic Society in the Republic of Armenia."

4. Հարությունյան Զ., Էլեկտրոնային փաստաթղթի ձեռքբերման, ստուգման և գնահատման հիմնախնդիրները ՀՀ քրեադատավարական ապացուցման գործընթացում, Երևան, 2018:

Harutyunyan Z., Issues of Acquisition, Verification, and Evaluation of Electronic Documents in the Criminal Procedural Proof Process of the Republic of Armenia, Yerevan, 2018.

5. Ղամբարյան Ա. (գիտ. խմբ.), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. Մաս 1, հեղինակային խումբ, Երևան, 2016:

A.Ghambaryan (ed.), Criminal Procedure of the Republic of Armenia. Part 1, authors' collective, Yerevan, 2016.

6. Баранов А.М., «Электронное доказательство: иллюзия уголовного процесса XXI века», // Уголовная юстиция, 2019, № 13.

Baranov A.M., "Electronic Evidence: The Illusion of Criminal Procedure in the 21st Century," // Criminal Justice, 2019, No. 13.

7. Гаврилин Ю.В., Расследование преступлений, посягающих на информационную безопасность в экономической сфере: теоретические, организационно-тактические и методические основы, монография, Тула, 2009.

Gavrilin Y.V., Investigation of Crimes Affecting Information Security in the Economic Sector: Theoretical, Organizational-Tactical, and Methodological Foundations, monograph, Tula, 2009.

8. Григорьев В.Н., Максимов О.А., «Некоторые вопросы использования электронных носителей информации при расследовании уголовных дел», // Полицейская деятельность, 2018, № 1.

Grigoriev V.N., Maksimov O.A., "Certain Issues of Using Electronic Information Carriers in the Investigation of Criminal Cases," // Police Activity, 2018, No. 1.

9. Зигура Н.А., Компьютерная информация как вид доказательств в уголовном процессе, Челябинск, 2010.

Zigura N.A., Computer Information as a Type of Evidence in Criminal Procedure, Chelyabinsk, 2010.

10. Зуев С.В., «Электронные доказательства, используемые в уголовном процессе», // Международная Ассоциация Содействия Правосудию.

Zuev S.V., “Electronic Evidence Used in Criminal Procedure,” // International Association for the Advancement of Justice.

11. Калиновский К.Б., Маркелова Т.Ю., «Доказательственное значение “электронной” информации в российском уголовном процессе», // Российский следователь, 2001, № 6.

Kalinovsky K.B., Markelova T.Y., “The Evidentiary Value of ‘Electronic’ Information in the Russian Criminal Procedure,” // Russian Investigator, 2001, No. 6.

12. Пастухов П.С., Модернизация уголовно-процессуального доказывания в условиях информационного общества, Москва, 2015.

Pastukhov P.S., Modernization of Criminal Procedural Proof in the Context of an Information Society, Moscow, 2015.

13. Пастухов П.С., Терехин В.В., «К вопросу о понятии и сущности электронных доказательств в уголовном процессе», // Серия “Государство и право”, 2014.

Pastukhov P.S., Terekhin V.V., “On the Concept and Essence of Electronic Evidence in Criminal Procedure,” // Series "State and Law," 2014.

Mane Safaryan
Prosecutor of the Prosecutor's Office of Lori region

ELECTRONIC EVIDENCE IN THE CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA[12]

Abstract

Pursuant to Protocol Decision No. 7 of the Government of the Republic of Armenia, dated February 25, 2010, titled "On Approving the Concept of Forming an Electronic Society in the Republic of Armenia," the legislative framework is required to establish fundamental legal concepts relating to information, electronic documents, digital signatures, confidentiality, and registration procedures. Moreover, it must regulate the processes of recording, processing, utilization, and dissemination of information, as well as define the legal norms governing electronic interactions.

The field of criminal justice has not remained impervious to the rapid advancement of information technologies. In the Republic of Armenia, there has been a consistent annual increase in the number of crimes committed through the use of digital technologies, alongside a growing necessity to rely on electronic and/or digital data during criminal proceedings. Under these circumstances, clarifying the legal status, evidentiary value, and procedural handling of electronic information within the criminal justice system has become an imperative of contemporary legal reform.

The increasing prevalence of digital technologies has prompted significant shifts in legal systems worldwide, particularly in the realm of criminal procedure. This study examines scholarly perspectives on the incorporation of electronic evidence as a distinct category within the evidentiary framework of criminal justice. It critically assesses the legal, procedural, and technological challenges associated with the use of electronic and digital information in judicial processes. The analysis underscores the urgency of adapting traditional evidentiary standards to the realities of the digital age. Accordingly, the paper proposes a set of recommendations aimed at ensuring that evidentiary practices evolve in tandem with rapid advancements in information and communication technologies.

Keywords: electronic information; electronic carrier; electronic evidence; material evidence; extrajudicial document.

[12] The article was presented on 05.05.2025 and was reviewed on 20.06.2025.

Мане Сафарян
Прокурор прокуратуры Лорийской области

ЭЛЕКТРОННЫЕ ДОКАЗАТЕЛЬСТВА В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ[13]

Абстракт

В соответствии с протокольным решением Правительства Республики Армения № 7 от 25 февраля 2010 года «Об одобрении Концепции формирования электронного общества в Республике Армения», действующее законодательство должно закреплять основополагающие правовые категории, связанные с информацией, электронным документом, цифровой подписью, конфиденциальностью, а также с процедурами учёта. Кроме того, необходимо нормативное регулирование порядка учёта, обработки, использования, предоставления информации, а также установление правовых основ электронных взаимодействий.

Современные тенденции развития информационных технологий в полной мере затрагивают и сферу уголовного судопроизводства. В Республике Армения наблюдается ежегодный рост числа преступлений, совершаемых с применением цифровых технологий, параллельно с чем возрастает и потребность в использовании электронных и (или) цифровых данных в рамках уголовного процесса. В этих условиях определение правового статуса, роли и места электронной информации в системе уголовного правосудия становится актуальной задачей и насущной необходимостью.

В данной работе исследуются научные подходы к интеграции нового вида доказательств — электронных доказательств — в систему доказывания в уголовном судопроизводстве. Особое внимание уделяется правовым и практическим аспектам использования электронной и цифровой информации в сфере уголовного правосудия.

Рассматриваются вызовы, связанные с необходимостью модернизации доказательной системы в условиях стремительного технологического прогресса. На основе проведённого анализа сформулирован ряд предложений, направленных на адаптацию современной системы доказывания к темпам развития информационно-коммуникационных технологий.

Ключевые слова: электронная информация; электронный носитель; электронное доказательство; вещественное доказательство; внесудебный документ.

[13] Статья была представлена 05.05.2025 и прошла рецензирование 20.06.2025.